Գ Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Ի Հ Ր Ա Վ Ե Ր

ՈՉ ԽՈՐՀՐԴԱՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՄԲ ԳՆՈՒՄ

Ծրագրի անվանումը՝	**Սոցիալական աշխատողների վերապատրաստման սեմինարների կազմակերպում**
Վճարման աղբյուրը՝	**«Հայաստանում սոցիալական ներառման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանում» ծրագիր JSDF Դրամաշնորհ No. TF0B2613**
Պայմանագիր No.	**AM-AASW-281408-NC-RFQ**
Ամսաթիվը՝	**15 ապրիլի, 2022թ.**

Հարգելի գործընկեր,

1. Հրավիրում ենք ներկայացնելու Ձեր Գնառաջարկը **Սոցիալական աշխատողների վերապատրաստման սեմինարների տեխնիկական բնութագիր (երկրորդ փուլ)** ոչ խորհրդատվական ծառայությունների (այսուհետ՝ Ծառայությունների) մատուցման նպատակով:

   Տեխնիկական առաջադրանքը կցվում է

2. Դուք պետք է գնառաջարկ ներկայացնեք սույն հրավերի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ բաժնում նշված բոլոր ծառայությունների անվանումների համար: Գնային առաջարկները կգնահատվեն բոլոր անվանումների համար միասին և պայմանագիր կկնքվի այն ընկերության հետ, որի բոլոր անվանումների համար առաջարկած, գնահատված ընդհանուր գինը կլինի նվազագույնը:
3. Ձեր Գնառաջարկը պետք է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ ուղարկելով procurement@aasw.org էլեկտրոնային հասցեին:
4. Պատվիրատուին Ձեր առաջարկը՝ 3-րդ կետում նշված էլեկտրոնային հասցեի միջոցով, ներկայացման վերջնաժամկետն է **4 մայիսի, 2022թ., ժ. 12:00 (տեղական ժամանակով):** Վերջնաժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում:

5. Ձեր առաջարկը՝ հայերեն լեզվով պետք է ներկայացվի համապատասխան տեխնիկական փաստաթղթերի, կատալոգ(ներ)ի և տպագիր այլ նյութերի ու համապատասխան տեղեկությունների հետ մեկտեղ՝ գնանշված յուրաքանչյուր անվանման համար՝ ներառելով կազմակերպությունների անվանումները և հասցեները, որոնք ապահովում են սպասարկման ծառայություններ Հայաստանում: **Չի կիրառվում (Չ/Կ)**

6. Ձեր առաջարկը պետք է ներկայացվի ստորև բերված հրահանգների և կից ներկայացվող Պայմանագրի համաձայն: Կցված Ծառայությունների մատուցման ժամկետները և պայմանները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

(i) <u>ԳՆԵՐ</u>- Գները պետք է ներկայացվեն ՀՀ դրամով՝ ընդհանուր արժեքի համար, որը ներառում է բոլոր հարկերը՝ ԱԱՀ, մաքսատուրքերը, տուրքերը, ինչպես նաև ծառայությունների մատուցման հետ կապված բոլոր ծախսերը:

(ii) <u>ԳՆԱՆՇՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ-</u> Տեխնիկական մասնագրերին էականորեն համապատասխանող առաջարկները կգնահատվեն ընդհանուր գնի համեմատման սկզբունքով:

Առաջարկները գնահատելիս Պատվիրատուն յուրաքանչյուր առաջարկի գնահատված գինը կորոշվի գնառաջարկի թվաբանական ցանկացած անճշտությունների ուղղումների միջոցով, հետևյալ կերպ.

ա) այնտեղ, որտեղ կա անհամապատասխանություն բառերով և թվերով տրված գումարների միջև, կգերակայի բառերով գրվածը,
բ) այնտեղ, որտեղ կա անհամապատասխանություն միավոր արժեքի և քանակի բազմապատկման արդյունքով ստացված ընդամենի միջև, կգերակայի նշված միավորի արժեքը,
գ) եթե Ծառայություններ մատուցողը հրաժարվի ընդունել ուղղումները, նրա առաջարկը կմերժվի:

<u>Որակավորմանն ուղղված պահանջներ.</u>

Ամենացածր գնահատված հայտը որոշելուց հետո Գնորդը պետք է իրականացնի Հայտատուի հետորակավորման գնահատումը կիրառելով ստորև սահմանված պահանջները: Այլ պահանջներ չպետք է կիրառվեն Հայտատուի հետորակավորման գնահատման ժամանակ:

*<u>(ա) Նմանատիպ պայմանագրերի փորձառություն (մոցույթային կառուցվածքի **հավելված** 1)</u>*
Մատակարարը պետք է ներկայացնի փաստաթղթային վկայություն (պայմանագրի պատճեն) առ այն, որ ունի նմանատիպ ոչ խորհրդատվական ծառայությունների հաջողությամբ ավարտված նվազագույնը երկու (2) պայմանագիր վերջին երեք (3) տարիների (2018-2021թթ.) ընթացքում:
ՀՁ դեպքում, յուրաքանչյուր ՀՁ անդամ պետք է ապահովի փորձառության նվազագույն պահանջը:

(iii) **<u>ԳՆՄԱՆ ՊԱՏՎԵՐԻ/ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՆՈՐՀՈՒՄ-</u>** Պայմանագիրը կշնորհվի այն առաջարկ ներկայացնողին, որը կառաջարկի գնահատված նվազագույն գինը և կբավարարի տեխնիկական պահանջներին: Հաղթող ճանաչված առաջարկ ներկայացնողը կստորագրի կից ձևով Պայմանագիրը, ինչպես նաև ծառայությունների մատուցման ժամկետները և պայմանները:

(iv) **<u>ԱՌԱՋԱՐԿԻ ՈՒԺԻ ՄԵՋ ԼԻՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏ-</u>** Ձեր առաջարկը պետք է ուժի մեջ լինի Գնառաջարկի Հրավերի 4-րդ կետում նշված առաջարկի ներկայացման վերջնաժամկետից հետո քառասունհինգ (45) օր ժամկետով:

7. Հետագա տեղեկատվություն.

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն երեք օրացուցային օր առաջ էլեկտրոնային **procurement@aasw.org** էլ հասցեի միջոցով պահանջելու հրավերի վերաբերյալ տեղեկատվություն/պարզաբանում:

8. Ստուգումներ և աուդիտ

8.1 Ծառայություններ մատուցողը պետք է ապահովի Պատվիրատուի բոլոր ցուցումների կատարումը, որոնք կհամապատասխանեն ծառայությունների մատուցման վայրի գործող օրենքներին:

8.2 Ծառայություններ մատուցողը պետք է թույլատրի և պետք է այնպես անի, որպեսզի վերջինիս Ենթակապալառուները և խորհրդատուները թույլատրեն Բանկին և/կամ Բանկի կողմից նշանակված անձանց ստուգել Պայմանագրի իրականացման և Գնանշման ներկայացման հետ կապված Ծառայություններ մատուցողի գրասենյակները և բոլոր հաշիվները և գրառումները Բանկի կողմից նման պահանջ լինելու դեպքում: Ծառայություններ մատուցողի և վերջինիս Ենթակապալառուների և խորհրդատուի ուշադրությունը հրավիրվում է Կետ 5-ին՝ Պայմանագրի խարդախության և կոռուպցիայի ձևին, որը ի լրումն այլ բաների, տրամադրում է այն գործողությունները, որոնք նպատակ ունեն սկզբունքորեն խոչընդոտելու Բանկի ստուգման և աուդիտի իրավունքների իրանացմանը և որոնք փոխարինում են արգելված միջոցառման, որը հանգեցնում է պայմանագրի դադարեցման (ինչպես նաև Բանկի գերակայող կանխարգելիչ ընթացակարգերի համաձայն՝ անհամապատասխանության որոշելուն):

Հարգանքով՝

Ռուբեն Մարկոսյան

«Հայաստանում սոցիալական ներառման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանում» ծրագրի ղեկավար

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԸ

Սույն Պայմանագիրը (թիվ՝ ——————————————), կնքվել է Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի նախագահ՝ ի դեմս նախագահ Միրա Անտոնյանի մի կողմից և «----------» տնօրեն՝ ի դեմս ———————————— (այսուհետ՝ Ծառայություններ մատուցող) միջև մյուս կողմից:

Կատարողը ի պատասխան Պատվիրատուի հրավերի առաջարկ է ներկայացրել «————————————————————————————————» ծառայության մատուցման

վերաբերյալ, որն ընդունվել է Պատվիրատուի կողմից: համաձայն առաջարկի Ծառայություններ մատուցողը վերոնշյալ ծառայություններն մատուցելու համար առաջարկել է ——————————————————— ՀՀ դրամ՝ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը (այսուհետ՝ Պայմանագրի գին), ուստի սույն Պայմանագիրը հետևյալի մասին է.

1. Ստորև նշվող փաստաթղթերը սույն Պայմանագրի անբաժանելի մասերն են.
ա) Ծառայություններ մատուցողի գնառաջարկը վերաբերում է ծառայությունների մատուցման պայմաններին, տեխնիկական պահանջներին,
բ) Լրացումներ (եթե կիրառելի են):
2. Հաշվի առնելով վճարումները, որոնք ստորև նշված ձևով կիրականացվեն Պատվիրատուի կողմից Ծառայություններ մատուցողին, Ծառայություններ մատուցողը Պատվիրատուի հետ կնքում է սույն Պայմանագիրը, համաձայն որի՝ պետք է ծառայությունները մատուցվեն սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան, իսկ հայտնաբերված ցանկացած թերությունները՝ վերացնվեն :
3. Սույնով Պատվիրատուն պարտավորվում է կատարել ծառայությունների մատուցման և վերացրած թերությունների հետ կապված վճարումները՝ Պայմանագրով սահմանված գնի չափով և վճարման պայմանների համաձայն:

4. Պայմանագրի դադարեցում (խզում)

4.1. Պայմանագիրը դադարեցվում է նշված պայմանները չկատարելու պարագայում

(ա) Պատվիրատուն Ծառայություններ մատուցողին սահմանված պարտավորությունների չկատարման վերաբերյալ գրավոր ծանուցումամբ կարող է ամբողջությամբ կամ մասնակի դադարեցնել պայմանագիրը՝ պահպանելով իր իրավունքը, ինչպես նաև պայմանագրի չկատարման հիմքով դիմելու որևէ այլ պաշտպանության միջոցի, եթե.

- Ծառայություններ մատուցողը չի կարողանում մատուցել որևէ կամ բոլոր Ծառայությունները Պայմանագրում նախանշված ժամկետում կամ տրամադրված երկարաձգված ժամկետում:
- Եթե Ծառայություններ մատուցողը չի կարողանում կատարել Պայմանագրի շրջանակում նախանշված ցանկացած պարտավորություն, կամ
- Եթե Ծառայություններ մատուցողը, Պատվիրատուի կարծիքով, Պայմանագրում առկա պարտավորությունները կատարելու ընթացքում ներգրաված է եղելխարդախության կամ կոռուպցիայի մեջ՝ համաձայն ստորև ներկայացվող Կետ 5-ի:

(բ) Այն դեպքում, երբ Պատվիրատուն ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնում է Պայմանագիրը, իր կողմից հարմար դիտարկվող պայմաններով և ձևով Պատվիրատուն կարող է ձեռք բերել համապատասխան Ծառայություններ, որոնք նման են չմատուցված կամ չտրամադրված ծառայություններին, իսկ Ծառայություններ մատուցողը պետք է փոխհատուցի Պատվիրատուի կողմից համանման Ծառայությունների ձեռք բերման համար կատարած ցանկացած լրացուցիչ ծախսերը: Այնուամենայնիվ, Ծառայություններ մատուցողը պետք է շարունակի Պայմանագրի կատարումը այնքան ժամանակ, քանի այն դադարեցված չէ:

4.2. Անվճարունակության համար Պայմանագրի դադարեցում
(ա) Պատվիրատուն կարող է ցանկացած ժամանակ դադարացնել Պայմանագիրը՝ այդ մասին ծանուցելով Ծառայություններ մատուցողին, եթե Ծառայություններ մատուցողը սնանկ կամ անվճարունակ է ճանաչվում: Այդ պարագայում դադարեցումը կլինի առանց Ծառայություններ մատուցողին փոխհատուցման, այն դեպքում, եթե Պայմանագրի դադարեցումը կանխակալ կարծիք չի ստեղծի կամ ազդի հայցի ներկայացման իրավունքի

կամ իրավունքի պաշտպանության միջոցի վրա, որը հաշվարկվել է կամ կարող է հաշվարկվել Պատվիրատուի կողմից:

4.3. Պայմանագրի դադարեցում՝ ըստ հարմարության

(ա) Պատվիրատուն Ծառայություններ մատուցողին ուղարկված ծանուցմամբ կարող է ցանկացած ժամանակ ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնել Պայմանագրի դրույթների կատարումը՝ ըստ անհրաժեշտության (հարմարության): Ծանուցմամբ պետք է սահմանվի, որ Պայմանագրի խզումը տեղի է ունեցել Պատվիրատուի նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության, ճշվի այն ծավալը որով դադարեցվում է Ծառայություններ մատուցողի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարումը, ինչպես նաև պետք է ճշվի այն օրը, երբ Պայմանագրի դրույթերի չկատարելը ուժի մեջ է մտնում:

(բ) Ապրանքները, որոնք պատրաստ են Ծառայությունները, որոնք պատրաստ են մատուցման համար Ծառայություններ մատուցողի կողմից դադարեցման մասին ծանուցումը ստանալուց հետո 28 (քսանութ) օրվա ընթացքում կընդունվեն Պատվիրատուի կողմից Պայմանագրի պայմաններով և գներով: Մնացած ծառայությունների համար Պատվիրատուն կարող է ընտրել.

(ա) Այն ծառայությունները, որոնք պատրաստ են առաքման համար քսան ութ (28) օրվա ընթացքում Ծառայություններ մատուցողի կողմից պայմանագրի դադարեցման մասին ծանուցումը ստանալուց հետո, պետք է ընդունվեն Պատվիրատուի կողմից պայմանագրի պայմաններով եւ գներով: Մնացած ծառայությունների համար Պատվիրատուն կարող է ընտրել

- ընդունել Ծառայությունների որոշակի մաս՝ ավարտված և մատուցված սույն Պայմանագրի պայմանների ու գների համաձայն
- չընդունել Ծառայությունների մնացած մասը և վճարել Ծառայությունները մատուցողին երկկողմ համաձայնեցված գումար՝ մասամբ ավարտված Ծառայությունների և Ծառայությունները մատուցողի կողմից նախապես ձեռքբերված նյութերի և պիտույքների համար.

5. Խարդախություն և կոռուպցիա

5.1 Եթե Պատվիրատուն որոշում է, որ Ծառայություններ մատուցողը և/կամ վերջինիս աշխատակիցներից որևիցե մեկը, կամ վերջինիս գործակալները կամ ենթակապալառուները, խորհրդատուները, ծառայություն մատուցողները և/կամ վերջիններիս աշխատակիցները Պայմանագրի իրականացման համար ներգրավված են եղել կոռուպցիոն, խարդախ, գաղտնի համաձայնությամբ պայմանավորված, հարկադրական կամ խոչընդոտող միջոցառումներում (ինչպես սահմանվում է Բանկի գերակայող կանխարգելիչ միջոցառումներում), ապա Պատվիրատուն կարող է Ծառայություններ մատուցողին կատարված 14-օրյա ծանուցմամբ դադարեցնել Ծառայություններ մատակարարումը պայմանագրի շրջանակում և չեղյալ հայտարարել Պայմանագիրը, իսկ 4-րդ կետի դրույթները պետք է կիրառվեն այն դեպքում, եթե նման բացառումն իրականացվել է ենթակետ 4.1-ի շրջանակում:

6. Ստուգումներ և աուդիտ

6.1 Ծառայություններ մատուցողը պետք է իրականացնի Պատվիրատուի բոլոր ցուցումներ, որոնք չեն հակասում ծառայությունների մատուցման վայրում կիրառվող օրենսդրության պահանջներին:

Ծառայություններ մատուցողը պետք է թույլատրի և աջակցի, որպեսզի վերջինիս ենթակապալառուները և խորհրդատուները թույլատրեն Բանկին և/կամ Բանկի կողմից նշանակված անձանց ստուգելու Պայմանագրի իրականացման և գնահատման ներկայացման գործընթացի հետ կապված

Ծառայություններ մատուցողի գրասենյակները,բոլոր հաշիվները և գրառումները Բանկի կողմից նմանօրինակ պահանջ լինելու դեպքում: Ծառայություններ մատուցողի և վերջինիս ենթակապալառուների և խորհրդատուի ուշադրությունը հրավիրվում է Կետ 5-ին՝ Պայմանագրի՝ Խարդախության և կոռուպցիայի ձևին, որն ի լրումն այլ բաների, տրամադրում է այն գործողությունները, որոնք նպատակ ունեն սկզբունքորեն խոչընդոտելու Բանկի ստուգման և աուդիտի իրավունքների իրականացմանը, փոխարինում են արգելված միջոցառման, որը Պայմանագրի դադարեցման (ինչպես նաև Բանկի գերակայող կանխարգելիչ ընթացակարգերի համաձայն՝ անհամապատասխանության որոշելուն):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա

Նախագահ՝ Միրա Անտոնյան
Հասցե՝ ՀՀ ,ք.Երևան , Կ. Ուլնեցու 64,
ՀՎՀՀ՝ 0183557
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570065283170100

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ

Տնօրեն՝
Հասցե՝
ՀՎՀՀ՝
Բանկ՝
Հ/Հ՝
Էլ. հասցե՝
Հեռ.

հավելված 3

ԳՆԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

Ամսաթիվ

Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիային

ՀՀ ,ք.Երևան , Կ. Ուլնեցու **64**

Մենք առաջարկում ենք իրականացնել ----------*(Պայմանագիր անվանումը և համարը),* համաձայն սույն Գնանաշման Հրավերին կցված պայմանագրի պայմաններին ---------- (*գումարը՝ բառերով և թվերով*) Պայմանագրի գնով՝ ներառյալ բոլոր հարկերը: Մենք առաջարկում ենք ավարտել Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցումը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետ, 8 շաբաթվա ընթացքում:

Սույն Առաջարկը և Ձեր գրավոր ընդունումը կհանդիսանա մեր միջև պարտադիր ուժ ունեցող Պայմանագիր: Մենք հասկանում ենք, որ Դուք պարտավոր չեք ընդունել ամենացածր գին ունեցող կամ Ձեր կողմից ստացված որևէ այլ Առաջարկ:

Սույնով մենք հաստատում ենք, որ սույն Առաջարկը համապատասխանում է Գնանշման Հրավերի փաստաթղթերի առաջարկի վավերության պահանջներին:

Լիազորված ստորագրություն

Ստորագրողի անունը և պաշտոնը

Ծառայություններ մատուցողի անվանումը

Հասցեն

Հեռախոսի համարը

Էլ. փոստ

հավելված 2

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ծրագրի անվանում՝ «Հայաստանում սոցիալական ներառման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանում» ծրագիր (*JSDF* դրամաշնորհ համար *TF0B2613*

Պատվիրատու՝ «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Փաթեթ՝ **No. AM-AASW-273583-NC-RFQ**

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՑՈՒՑԱԿ

Ծառայության անվանումը	**Քանակը /հատ/**	**Մեկ միավորի գինը** (ներառյալ ուղղակի և անուղղակի հարկեր, մաքսային վճարումներ, պարտավորություններ և այլ տեղական ծառայություններ (եթե առկա են), **ՀՀ դրամ**	**Գինը ընդհանուր (2*3) (ՀՀ դրամ)**	**Մատուցման վայրը/հասցեն**	**Մատուցման ժամկետը**
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
«Սոցիալական աշխատողների վերապատրաստման սեմինարների իրականացում» համաձայն կից Տեխնիկական Առաջադրանքի					
Ապահովել Միասնական սոցիալական ծառայության 200 սոցիալական աշխատողների և համայնքային սոցիալական աշխատողների (այսուհետև՝ վերապատրաստման սեմինարի մասնակիցներ) Արարատի, Արմավիրի, Ծիրակի, Լոռու և Կոտայքի մարզերից, ինչպես նաև դասընթացավարների (16)	*115* *101*			***Համաձայն Տեխ Առաջադրանքի պայմանների***	***Մարտ-Ապրիլ Ծաղկաձոր/Աղվերան/Արզնի*** ***Մարտ-Ապրիլ Դիլիջան***

Երկկողմանի տեղափոխումը իրենց բնակավայրերից դեպի վերապատրաստման անցկացման վայր (մասնակիցների ցանկը և համապատասխան ժամանակացույցը կտրամադրվի ԾԻԳ-ի կողմից): Ընդամենը՝ 216 մասնակից					
Ընդամենը՝ միջոցառման համար					
Գիշերակաց՝ մեկ գիշեր և երկու օր: (յուրաքանչյուր խմբում 2 դասընթացավար), ներառյալ նախաճաշ Ընդամենը՝ 216 մասնակից	*115* 101				***Մարտ-Ապրիլ Ծաղկաձոր/Աղվերան/Արզնի*** ***Մարտ-Ապրիլ Դիլիջան***
Ընդամենը՝ միջոցառման համար					
Հանդիպումների դահլիճներ առնվազն երկու առանձին կոնֆերանսների/հանդիպումների դահլիճներ 30 մասնակցի համար երկու օրվա համար	**4** **4**				***Մարտ-Ապրիլ Ծաղկաձոր/Աղվերան/Արզնի*** ***Մարտ-Ապրիլ Դիլիջան***
Ուսումնական նյութեր, ցանկը համաձայն Տեխ Առաջադրանքում նշված ցուցակի (ընդամենը՝ 216 փաթեթ)	216				***Մարտ-Ապրիլ Ծաղկաձոր/Աղվերան/Արզնի*** ***Մարտ-Ապրիլ Դիլիջան***
Ընդամենը՝ միջոցառման համար					
Սուրճի ընդմիջում (սուրճ, թեյ, կաթ, թխվածք, ջուր/հյութ, միրգ) Ընդամենը՝ 216 մասնակից x 4 անգամ սուրճի ընդմիջում	115x4 101x4				***Մարտ-Ապրիլ Ծաղկաձոր/Աղվերան/Արզնի*** ***Մարտ-Ապրիլ Դիլիջան***

Ընդամենը՝ միջոցառման համար					
Ճաշ և ընթրիք (երկու ճաշ և մեկ ընթրիք) 216 մասնակից	115x3 101x3				***Մարտ-Ապրիլ Ծաղկաձոր/Աղվերան/Արզնի*** ***Մարտ-Ապրիլ Դիլիջան***
Ընդամենը՝ միջոցառման համար					
ԸՆԴԱՄԵՆԸ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՐ					

Նշում. Միավորի գնի հաշվարկման և ծառայությունների մատուցման ընդհանուր գնի միջև տարբերության դեպքում գերակայողը միավորի գինն է:

2. <u>ՖԻՔՍՎԱԾ ԳԻՆ.</u> Վերոնշյալ գներն անփոփոխ են ու ֆիքսված և սույն Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխման ենթակա չեն:

3. Պատվիրատուին իրավունք է վերապահված վերջնական պայմանագրի պատրաստման ժամանակ մինչև 15 տոկոսի չափով ավելացնել կամ պակասեցնել ծառայությունների նախնական քանակները՝ առանց միավորի գնի, ինչպես նաև այլ պայմանների փոփոխության:

4. <u>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ.</u> Ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 8 (ութ) շաբաթվա ընթացքում :

5. <u>ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u> Չ/Կ

6. <u>ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ.</u>

7. Սույն Պայմանագիրը պետք է մեկնաբանվի Պատվիրատուի երկրի օրենսդրության համաձայն:

8. <u>ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ.</u> Պատվիրատուն և Ծառայություններ մատուցողը պետք է ձեռնարկեն բոլոր ջանքերը, որպեսզի ուղղակի, ոչ պաշտոնական բանակցությունների միջոցով բարեկամաբար լուծեն իրենց միջև սույն Պայմանագրի շրջանակում առաջացած ցանկացած տարաձայնություն կամ վեճ: Պատվիրատուի և Ծառայություններ մատուցողի միջև առաջացած, չլուծված վեճի դեպքում այն ենթակա է լուծման Պատվիրատուի երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. <u>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ</u>. Ծառայությունները մատուցողը պետք է էլեկտրոնային հասցեով կամ թղթային տարբերակով ուղարկի այդ փաստաթղթերը Պատվիրատուին.

ա. Ծառայությունների մատուցողի հաշիվ-ապրանքագիրը՝ նշելով ծառայությունների նկարագրությունը, քանակը, միավորի արժեքը և ընդհանուր արժեքը:
բ. Հավաստող փաստաթղթեր (օր.՝ պայմանագրեր,հանձման-ընդունման ակտեր և այլն):

10. <u>ՎՃԱՐՈՒՄ.</u> Վճարումը կատարվում է հարյուր տոկոսի չափով բանկային փոխանցմամբ Ծառայություններ մատուցողի և Գնորդի ներկայացուցիչների կողմից, ծառայությունների մատուցման ավարտից հետո 30օրվա ընթացքում ընդունված ծառայության արժեքի չափով:

<u>11. ԵՐԱՇԽԻՔ Չ/Կ;</u>
<u>12. ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՆՇԱԳՐՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ Չ/Կ</u>

13. <u>ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.</u> Բոլոր թերությունները պետք է վերացվեն Ծառայություններ մատուցողի կողմից Պատվիրատուի ծանուցումից հետո երեք (3) օրվա ընթացքում՝ առանց Պատվիրատուի կողմից լրացուցիչ վճարման:

14. <u>ՖՈՐՍ ՄԱԺՈՐ.</u> Ծառայություններ մատուցողի նկատմամբ տույժեր չեն կիրառվի և պայմանագիրը չի դադարեցվի այն դեպքում, եթե ծառայությունների մատուցման ուշացումը կամ պարտականությունների կատարման հետ կապված ձախողումը պատճառը ֆորսմաժորային իրադարձությանն է: Այս կետի շրջանակում «Ֆորս Մաժոր» նշանակում է. Ծառայություններ մատուցողի հսկողությունից դուրս գտնվող իրադարձություն, որը չի ներառում Ծառայություններ մատուցողի սխալը կամ անփութությունը, և որը կանխատեսելի չէ: Այդպիսի իրադարձությունները կարող են ընդգրկել, սակայն չսահմանափակվել Պատվիրատուի ինֆինիրավ գործողություններով, պատերազմներով կամ հեղափոխություններով, հրդեհներով, հեղեղումներով, համաճարակներով, կարանտինային սահմանափակումներով և էմբարգոներով: «Ֆորս Մաժոր»-ի դեպքում Ծառայություններ մատուցողը պետք է անհապաղ գրավոր ծանուցի Պատվիրատուին նմանաբնույթ իրավիճակի և դրա պատճառների մասին: Եթե Պատվիրատուից այլ գրավոր հրահանգ չի ստացվում, Ծառայություններ մատուցողը պետք է շարունակի հնարավորության սահմաններում սույն Պայմանագրի շրջանակում իր պարտականությունների կատարումը, պետք է աշխատի գտնել «Ֆորս Մաժոր» իրադարձությամբ չկանխարգելվող՝ աշխատանքի համար բոլոր իրագործելի այլընտրանքային տարբերակները:

15. <u>ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ.</u>

- Ընդհանուր նկարագրություն,
- Առանձնահատուկ մանրամասներ և տեխնիկական ստանդարտներ,
- Կատարողականի չափորոշիչներ:

Ծառայություններ մատուցողը հաստատում է, որ վերոնշյալ մասնագրերը համապատասխանում են վերևում նշված կետերի բնութագրիչներին: (Շեղումների դեպքում Ծառայություններ մատուցողը պետք է ներկայացնի դրանք ստորև):

Ծառայություններ մատուցողի անունը

Լիազորված անձի ստորագրությունը

Ամսաթիվը

«Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա»
հասարակական կազմակերպությունը

«Հայաստանում սոցիալական ներառման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանում» ծրագիր
JSDF Դրամաշնորհ No. TF0B2613

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Սոցիալական աշխատողների վերապատրաստման սեմինարների տեխնիկական բնութագիր (երկրորդ փուլ)

1. Ծրագրի մասին

Այս տեղեկիկական բնութագրով (ToR) նախատեսված առաջադրանքը տրամադրվելու է «Հայաստանում սոցիալական ներառման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանում» (“Promoting Social Inclusion and Self-Reliant Livelihood Activities in Armenia”) դրամաշնորհային ծրագրի (հետայսու՝ Ծրագիր) շրջանակում, որը իրականացվում է ըստ դրամաշնորհային համաձայնագրի (JSDF Դրամաշնորհ No. TF0B2613)՝ կնքված «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» (AASW) հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Ասոցիացիա) և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի / Միջազգային զարգացման ասոցիացիայի (այսուհետ՝ Համաշխարհային բանկ) միջև՝ հանդես եկող որպես դրամաշնորհային միջոցների ադմինիստրատոր, 2020 թ. մայիսի 06-ին:

Ծրագրի դրամաշնորհը տրամադրվել է Ճապոնիայի Սոցիալական Զարգացման Հիմնադրամի **(Japan Social Development Fund, JSDF)** կողմից, որը ֆինանսավորում է Ճապոնիայի կառավարությունը:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնեմ 2020-2023թթ. ժամանակահատվածում:

Ծրագրի զարգացման նպատակն **(PDO)** է՝ բարձրացնել սոցիալական աջակցության նպաստների և ծառայությունների մատչելիությունը և ինքնազբաղվածության աջակցություն տրամադրել Հայաստանի ընտրված մարզերի շուրջ **11000** ծայրահեղ խոցելի անձանց**:** Նպատակին հնարավոր կլինի հասնել՝ ուժեղացնելով գործող համայնքային և պետական (տարածքային) սոցիալական աշխատողների դերը՝ որպես կապող օղակ տնային տնտեսությունների և հասանելի սոցիալական աջակցության նպաստների և ծառայությունների միջև, և ԸՆԾ-ի շահառուներին ձեռնարկատիրական աջակցություն տրամադրելով՝ որպես ծրագրից դուրս գալու ուղի:

Ծրագիրը ներառում է հետևյալ **3** բաղադրիչները՝

(i) Բաղադրիչ 1. Խորհրդատվական պիլոտային ծրագրի մշակում և իրականացում.

Սույն բաղադրիչը կաջակցի ոլորտային պետական ծրագրերին՝ մշակելու և ներդնելու սոցիալական դեպքի վարման համալիր մոտեցում, որը երկրի սոցիալական պաշտպանության և զբաղվածության ոլորտում կծառայի ծառայությունների և նպաստների ներքին ներդաշնակության բարձրացմանը:

Այս բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է իրականացնել սոցիալական աշխատողների վերապատրաստում (3 փուլ՝ 2-օրյա վերապատրաստման սեմինարներ և աշխատավայրում ուսուցում (ֆուչինգ)):

(ii) Բաղադիչ 2. Կարողությունների զարգացում և ձեռնարկատիրական աջակցություն.

Այս բաղադրիչի շրջանակում կներդրվեն ձեռնարկատիրական աջակցության ծրագրերը, մասնավորապես՝ կփորձարկվի «Ընտանեկան նպաստ» ծրագրի ազատ աշխատուժ ունեցող շահառու ընտանիքներին փոքր բիզնես սկսելու նպատակով դրամաշնորհների տրամադրման ծրագիրը, որը կուղեկցվի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ վերապատրաստումներով և խորհրդատվությամբ (ֆուչինգ):

(iii) Բաղադրիչ 3: Ծրագրի կառավարում և կազմակերպում, մոնիտորինգ ու գնահատում և գիտելիքների տարածում.

Այս բաղադրիչը կապահովի դրամաշնորհային գործունեության պատշաճ իրականացումը և վերահսկումը, ներառյալ մոնիտորինգի և գնահատման (M&E) գործողությունները, որոնք ուղղված են ծրագրի կատարողականի և արդյունքների գնահատմանը, ինչպես նաև գիտելիքների տարածման միջոցառումները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ծրագրի հիմնական գործընկեր կառույցն է: «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» ՀԿ, JSDF դրամաշնորհ ստացողը և ծրագիրն իրականացնող գործակալությունը (ՄԻԳ) պայմանագիր կնքող մարմին է սույն ToR -ում նշված հանձնարարականի համար: «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» ՀԿ-ի (հիմնադրվել է 2004թ) հիմնական նպատակներն են Հայաստանում սոցիալական աշխատանքի կրթության և պրակտիկայի զարգացումը,սոցիալական աշխատողների և նրանց շահառուների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ինչպես նաև ՀՀ-ում սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումներին նպաստելը:

2. Խորհրդատվության նպատակը

Այս հանձնարարականի հիմնական նպատակն է տեխնիկական և նյութատեխնիկական աջակցություն տրամադրել Ծրագրի բաղադրիչ-1-ի «Սոցիալական աշխատողների կարողությունների զարգացում» ենթաբաղադրիչի իրականացման համար:

Մասնավորապես, պայմանագրով հաստատված տեղական ծառայություններ մատուցող կազմակերպությունը տեխնիկական և լոգիստիկ աջակցություն կտրամադրի Արարատի, Արմավիրի, Շիրակի, Լոռու և Կոտայքի մարզերի 200 սոցիալական աշխատողների և համայնքային սոցիալական աշխատողների համար երկրորդ փուլի երկօրյա վերապատրաստման սեմինարների կազմակերպման համար (8 վերապատրաստման խմբեր, 20-30 մասնակից յուրաքանչյուր խմբում):

3. Աշխատանքի շրջանակը

Ծառայություններ մատուցող կազմակերպությունը սույն հանձնարարությամբ իրականացնելու է հետևյալ գործառույթները.

1) Ապահովել Միասնական սոցիալական ծառայության 200 սոցիալական աշխատողների և համայնքային սոցիալական աշխատողների (այսուհետև՝ վերապատրաստման սեմինարի մասնակիցներ) Արարատի, Արմավիրի, Շիրակի, Լոռու և Կոտայքի մարզերից, ինչպես նաև դասընթացավարների (16) երկկողմանի

տեղափոխումը իրենց բնակավայրերից դեպի վերապատրաստման անցկացման վայր (մասնակիցների ցանկը և համապատասխան ժամանակացույցը կտրամադրվի ԾԻԳ-ի կողմից):

2) Ապահովել վերապատրաստման մասնակիցների և դասընթացավարների (յուրաքանչյուր խմբում 2 դասընթացավար) գիշերակացը՝ մեկ գիշեր և երկու օր:
3) Ապահովել հարմարավետ աշխատանքային տարածքներ վերապատրաստումն անցկացնելու համար (առնվազն երկու առանձին կոնֆերանսների/հանդիպումների դահլիճներ 30 մասնակցի համար՝ ապահովելով մասնակիցների միջև բավարար սոցիալական հեռավորություն՝ կապված COVID-19 սահմանափակումների հետ), ինչպես նաև սարքավորումներ (նոթբուք կամ համակարգիչ, պրոյեկտոր, էկրան, գրատախտակ և այլն), ինտերնետ: Աշխատանքային սրահները պետք է ունենան բնական լուսավորություն, բավարար տարածք զուգահեռ խմբային վարժությունների համար և չպետք է տեղակայված լինեն նկուղային հարկերում:
4) Տրամադրել ուսումնական նյութեր և համապատասխան փաթեթներ:
5) Ապահովել մասնակիցներին սննդով (2 ճաշ և 1 ընթրիք) և չորս (4) սուրճի ընդմիջումով սեմինարի անցկացման վայրում՝ համաձայն PIA-ի կողմից տրամադրված կազմակերպչական օրակարգի.

4. Վերապատրաստման վայր

Վերապատրաստման անցկացման վայրը պետք է լինի համապատասխան սարքավորումներով հագեցած, ժամանակակից և հարմարավետ դասընթացի իրականացման համար:
Վերապատրաստման վայրը պետք է ունենա նաև գիշերակացի հնարավորություն: Գիշերակավցը պետք է լինի երկտեղանի ստանդարտ սենյակներում (մեկտեղանոց սենյակ կարող է տրամադրվել մասնակցի սեռով պայմանավորված և/կամ հատուկ կարիքների դեպքում), ներառի նախաճաշ (շիլա, կաթ, ձու, միրգ, հյութ, հաց, պանիր, կարագ, սուրճ, թեյ ջուր): Սենյակներում պետք է հասանելի լինի Wi-Fi: Այլ ծառայությունները ներառում են 24-ժամյա ընդունարան և սենյակի սպասարկում:

Ճաշը և ընթրիքը պետք է մատուցվեն վերապատրաստման անցկացման վայրում: Սնորնդը (ճաշ և/կամ ընթրիք)՝ ճաշատեսակների ընտրությամբ, պետք է մատուցվի ռեստորանում կամ տվյալ վայրի ներսում գտնվող այլ հարմար տարածքում: Ճաշը պետք է ներառի հետևյալը և նախատեսվի առնվազն մեկ բուսական տարբերակ յուրաքանչյուր կատեգորիայում (անհրաժեշտության դեպքում)՝

- երկու տեսակի թարմ աղցան,
- Նախուտեստների երկու տարբերակ (օրինակ՝ պանրով կարկանդակ, ֆիշ, բանջարեղենային տորթ)
- Երկու տեսակի ապուր
- Երկու տեսակի գարնիր (օրինակ՝ պաստա, կարտոֆիլ, բանջարեղեն, բրինձ)
- Երկու տեսակի հիմնական ուտեստ (օր. ձուկ, խոզի միս, տավարի միս, հավ, բանջարեղեն՝ որպես հիմնական ուտեստ)
- Աղանդեր
- Թարմ մրգի տեսականի
- Զովացուցիչ ըմպելիքների, գազավորված և չգազավորված հանքային ջրի ընտրություն
- Հացի տեսականի

Սուրճի ընդմիջումները պետք է մատուցվեն համապատասխան տարածքում՝ անմիջապես դահլիճի ներսում (ցանկալի է) կամ դրսում: Սուրճի ընդմիջումները պետք է ներառեն առնվազն հետևյալը՝

- Սև և լուծվող սուրճ, առանց կոֆեինի սուրճ, բուսական ընտրանքներով թեյերի ընտրություն,

- Մրգային հյութի, ջրի, կաթի ընտրություն,
- Քաղցրավենիք (տարբեր թխվածքաբլիթներ և տորթեր)
- Նախուտեստներ (օրինակ՝ մինի պանրով կարկանդակներ, մինի կրուասաններ)

5. Վերապատրաստումների ամսաթվերը և վայրը

Վերապատրաստումները կկազմակերպվեն մի քանի փուլերով սկսած 2022թ. մայիսի 11-ից երկու վայրերում՝ (i) Ծաղկաձորում կամ Աղվերանում կամ Արզնիում և (ii) Դիլիջանում: Մասնակիցների թիվը ըստ յուրաքանչյուր փուլի և գտնվելու վայրի կտրամադրվի ԾԻԳ-ի կողմից:

6. Մասնակիցների տեղափոխում
Բոլոր թրեյնինգների համար նախատեսված փոխադրումը պետք է տրամադրվի վերապատրաստման մասնակիցներին և դասընթացավարներին:

<u>Յուրաքանչյուր համայնքից և ռեֆլեկտիվ վերապատրաստման վայրից մասնակիցների թիվը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:</u>

#	Մարզ	Անցկացման վայր	Մասնակիցների քանակ
1	Արարատ (Վեդի, Մասիս, Արարատ, Արտաշատ)	Ծախկաձոր/Աղվերան/Արզնի	41
2	Արմավիր (Վաղարշապատ, Արմավիր, Բաղրամյան)	Ծախկաձոր/Աղվերան/Արզնի	38
3	Կոտայք (Եղվարդ, Զարենցավան, Աբովյան,)	Ծախկաձոր/Աղվերան/Արզնի	28
4	Լոռի (Վանաձոր, Ստեփանավան, Թումանյան, Սպիտակ, Տաշիր)	Դիլիջան	42
5	Կոտայք (Հրազդան)	Դիլիջան	11
6	Շիրակ (Արթիկ Աշոցք, Ախուրյան, Մարալիկ, Ամասիա Գյումրի)	Դիլիջան	40
7	Երևան (դասընթացավարներ)	Ծախկաձոր/Աղվերան/Արզնի	8
8	Երևան (դասընթացավարներ)	Դիլիջան	8
		Ընդհանուր	216

*Մասնակիցների վերջնական ցուցակը, ովքեր կարիք ունեն երկկողմանի փոխադրումների, կտրամադրվի ԾԻԳ-ի կողմից:

7. Ուսումնական նյութեր

Ծառայություն մատուցող կազմակերպությունը (ընդհանուր 8 խումբ) պետք է տրամադրի ֆլիպչարտեր (խմբում 2-ը) ((A1, 20 էջ)) և մարկերներ (խմբում 10-ը), ինչպես նաև ուսումնական փաթեթ (թղթապանակ (A4 չափսի թուղթ՝ համապատասխան բրենդով՝ տրամադրված է ԾԻԳ-ի կողմից), էկո-գրիչ, նոթատետր (A5, 40 էջ)) յուրաքանչյուր մասնակցի համար:

8. Ծառայություն մատուցող կազմակերպությանը ներկայացվող պահանջներն են՝

- նմանատիպ ծառայությունների մատուցման առնվազն 3 տարվա փորձ (տեխնիկական և նյութատեխնիկական աջակցություն վերապատրաստման միջոցառումների, կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման համար), որը կարող է հաստատվել տրամադրված տեղեկանքներով (առնվազն 2 կազմակերպություններից տեղեկանքներ):
- Տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից աջակցվող ծրագրերի շրջանակներում նմանատիպ ծառայությունների մատուցման փորձ
- Նշված վայրերում (մարզերում) ծառայություն մատուցելու փորձը կդիտվի որպես առավելություն